Ավետիք Իսահակյան

Հովհաննես Ավագյանին, 1924թ . , մարտի 9, Վենետիկ

Սիրելի պարոն Հովհ. Ավագյան.
Շնորհակալությամբ ստացա Ձեր նամակը և 20դոլլարը:
Արդարև, թեպետ շա՞տ զբաղված եմ, որովհետև վեպս կլանում է բոլոր ժամերս և ուշադրությունս, սակայն պիտի չմոռանամ «Կոչնակը», որ գնահատելի թերթ է և նրա մեջ հյուրասիրվելը՝ միշտ պատվաբեր:
Շտապում եմ, գոնե մինչև ամառային տաքերը, վեպիս առաջին հատորը /երկու հատոր է լինելու/ վերջացնեմ, մյուսը՝ աշնանը:
Արդեն դադարել եմ ուրիշ թերթերի մասնակցել՝ բացի «Կոչնակից» և «Հայրենիքից»: Հույս ունեմ շուտով մի բան հասցնել:

Ջերմ հարգանքներով ու բարևներով,
Մնամ Ձեր անձնվեր՝
Ավ. Իսահակյանց